

ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ ՄԵՐ ԵՐԿԻՐ

Հայկական արդի սփիւոքը, Հայոց ցեղասպանութեան հետեւանքով բռնագաղթի ենթարկուած արեւմտահայութեան հարկադիր բայց ժամանակաւոր գոյավիճակն է, որու յաւերժացման որեւէ փորձ, խաբկանք եւ վերջնական կորստեան ուղի է արեւմտահայութեան եւ իր հայրենիքի՝ արեւմտեան Հայաստանի համար:

Արդի սփիւոքի գոյատեւման հիմքը իր հայրենագուրկ կեցութեան բուն պատճառի՝ արեւմտեան Հայաստանի կորստեան հստակ գիտակցումն է եւ իրեն վերաստիրանալու համար պայքարը:

Մեր պայքարի ներկայ հանգրուանին համար բնորոշ են աշխարհի մէջ առաջացող սկզբունքօրէն նոր իրողութիւնները, որոնց ամենաբնորոշ առանձնայատկութիւնը, մեծապետական շահերու բախման հանգոյծներու մէջ սեփական պետութիւն կերտելու հնարաւորութեան, դարերով զրկուած փոքր ժողովուրդներու անկախութիւն ձեռք բերելու՝ փաստերու յաջորդական շարքն է:

Միաբեւեռ աշխարհակարգին մէջ, մեծապետական շահերու բախման վրայ հիմնուած հաւասարակշռութեան փոխարինելու կուգայ առկայ ուղի, ընդամենը միաբեւեռ թելադրուած քաղաքական բռնութեան, ազգային ու կրօնական խտրութեան վրայ հիմնուած վարչակարգերու ու պետութիւններու քայքայման ու տրոհման գործընթացքը. Այս գործընթացի հետեւողական ու անշեղ մօտեցումը Թուրքիոյ սահմաններուն, կը վկայէ այն մասին, որ ցեղասպանութեան ու բռնագաղթի ենթարկուած Արեւմտահայութեան յաջորդական սերունդներէն մեզի վիճակուած է, մեր նախնիներէն մեր հայրենիքը բռնագաղթած պետութեան սպասող նոյնանման զարգացումներու ականատեսը ըլլալու հնարավորութիւնը. Սակայն մենք չենք կրնար եւ ոչ ալ իրաւունքը ունինք պարզապէս հոգեկան բաւարարութիւն ստանալ նման անխուսափելիութեան ականատեսը ըլլալու փաստէն, ու դառնալ կողմնակի դիտորդ՝ այն գործընթացի մէջ, որը պիտի շոշափէ ոչ միայն Թուրքիոյ, այլ նաեւ իր կողմէն բռնագաղթուած՝ մեր հայրենիքի՝ արեւմտեան Հայաստանի ճակատագիրը. Ուրեմն եկած է սփիւոքի ներկայ համայնքային-կղզիացած գոյավիճակը Արեւմտահայութեան՝ որպէս իրաւազրկուած ամբողջութեան, քաղաքական կարգաւիճակին համապատասխանեցնելու, սփիւոքի Արեւմտահայ մշակութային ինքնութիւնը պահպանելով, զարգացնելու եւ մեր բուն հայրենիք՝ Արեւմտեան Հայաստան վերադարձի դժուարին՝ սակայն հնարաւոր եւ միանգամայն տեսանելի ճամբուն կանգնելու պահը:

Մեր հայրենիքը հոն է ուր ծնած են ցեղասպանութեան հարկադրանքով այն լքած մեր հայրերն ու մեծ հայրերը մեզ իբրեւ կտակ ձգած, ոչ թէ Հայաստանի մէկ հատուածէն միւսը տեղափոխուելու, կամ ալ՝ արտասահմանի բարեկեցիկ կեանք որոնելու, այլ միայն ու միայն երկիր՝ Արեւմտեան Հայաստան վերադառնալու եւ հոն իբրեւ ազգ ազատօրէն ինքնորոշելու պատգամը:

Հայ դատի պայքարի յաջորդական հանգրուանները անհերքելիօրէն եւ վերջնականապէս ապացուցած են, որ իր առարկան եղած է ու կը մնայ Արեւմտեան Հայաստանը, իսկ ենթական անկէ բռնութեամբ դուրս մղուած ու աշխարհով մէկ ցրուած արեւմտահայութիւնը:

Ցեղասպանութեան իրականացման ճամբով, Արեւմտեան Հայաստանի բռնագաղթումը իր սեփական տերերէն՝ արեւմտահայերէն, համաձայն Միացեալ Ազգերու կազմակերպութեան «Ցեղասպանութեան հանցագործութիւնը կանխելու եւ

իր վերաբերեալ պատիժի մասին» 1948-ի Դեկտեմբերի 9-ի համաձայնագրին, վաղեմութիւնը չճանցող հանցագործութիւն կը համարուի, որու հետեւանքներու հաղթահարման համար 1920-ի Օգոստոս 10-ին ստորագրուած Սեւրի դաշնագիրը եւ իրմէ բխող ԱՄՆ-ի Նախագահ Վուորո-Ուիլսոնի 1920-թուականի Նոյեմբեր 22-ի իրաւարարական վճռագիրը հստակացուցած են Արեւմտեան Հայաստանի այն սահմանները, որոնց վրայ կը տարածուին արեւմտահայութեան անժամանցելի իրաւունքները:

Արեւմտեան Հայաստանի իրավատերերը ցեղասպանութեան ենթարկուած ու իրենց հայրենիքէն դուրս մղուած արեւմտահայութիւնն է, որը որպէս հայկական արդի Սփիւռք ներկայումս ոչ՝ միայն կրնայ, այլ եւ պարտաւոր է հետապնդել հայրենիք վերադառնալու ու իր միջազգայնօրէն ճանչցուած սահմաններու մէջ ազատօրէն ինքնորոշուելու խնդիրը, ուղղակիօրէն, իբրեւ 1920-թուականի Օգոստոս 10-ի Սեւրի դաշնագրով եւ ԱՄՆ-ի նախագահ Վուորո-Վիլսոնի 1920-թուականի Նոյեմբեր 22-ի իրաւարարական վճռագրով սահմանուած Արեւմտեան Հայաստանի տարածքներէն բռնութեամբ տեղահանուած ժողովուրդ՝ արեւմտահայութիւնը:

Արեւմտեան Հայաստան վերադառնալու եւ իր հողերու վրայ ազատօրէն ինքնորոշուելու խնդիրը, այսուհետեւ մենք պարտաւոր ենք ընկալելու ոչ՝ իբրեւ հեռաւոր ապագայի երազանք եւ ոչ ալ անհաղթահարելի քաղաքական արգելքներու բախտող առաջադրանք:

Աշխարհի ամբողջ երկիրներու քաղաքականութիւնը օրէ-օր կը փոխուի առանց ետ դառնալու, եւ մեր մեծ երազի իրականացման ճանապարհին, առկայ առարկայական խոչնդոտները երդալով կը մաշուին եւ կը նոսրանան, իսկ ենթակայական արգելքներու հաղթահարելը կախուած է ամէն ինչէն առաջ մեզմէ, Արեւմտեան Հայաստանէն սերունդ յաջորդական սերունդներէն բաղկացած սփիւռքի Հայութենէն: Սփիւռքի փրկութեան ուղին որպէս բռնադատուած, սակայն պահանջատեր ամբողջութիւն, կրկին մենք մեզի վերագտնելու, համախմբուելու, եւ հայրենիք վերադառնալու գործին պատրաստ նոր հասուն սերունդ հասցնելու դժուարին, բայց միանգամայն տեսանելի ուղին է, որու վրայ հաստատուն կերպով կանգնելու համար, անհրաժեշտ ծանր ու տքնաջան գործի նախաձեռնութիւնը այլեւս հետաձգելը հնարաւոր չէ:

Ուրեմն, պահի հրամայականը, արտաքին բնոյթի այլեւայլ խոչնդոտներուն համիմաստ գործելու անհրաժեշտութեան մէջը չէ, այլ թէ ինչքանով պատրաստ է արդի սփիւռքը՝ ժողովրդաւարութեան հաղթարշաւի եւ բռնադատուած ժողովուրդներու իրավունքներու վերականգնման Ուիլսոնեան սկզբունքներու հաստատման ներկայ իրողութիւններու պայմաններու մէջ, մտածելու ու գործելու, աշխարհի ձեւաւորող նոր կացութիւններուն համապատասխան, այսինքն՝ վերախմաստաւորելու իր անցած ուղին, վերագտնելու ինքն՝ իրեն որպէս Արեւմտեան Հայաստանի բնակիչ տերերու յաջորդական սերունդներու «ժառանգորդներու» չընդհատող շղթայ, եւ վերականգնելու իր բռնազաւթուած հայրենիքի հետ ունեցած իրաւական, հոգեբանական, մշակութային, տնտեսական ու քաղաքական կապերը: Իսկ այդ բոլորը հնարաւոր կըլլայ միայն ու միայն մեր ազգային մտածելակերպի եւ մօտեցումներու հիմնական վերափոխման ժամբով:

Համոզուած ըլլալով, որ Սփիւռքի գոյութեան բուն իմաստը եղած է ու կը մնայ արեւմտահայութեան հանդէպ իրականացուած ցեղասպանութեան

հանցագործության հետեւանքներու հաղթահարումն ու վերադառնալիս դէպի Արեւմտեան Հայաստան:

Նկատի ունենալով Հայ ժողովուրդի իրաւազրկուած մեծամասնութեան՝ արեւմտահայութեան համար իրենցմէ բռնազաւթուած տարածքային-քաղաքական, տնտեսական-գույքային ու մարդկային-բարոյական իրավունքներու վերականգնման եւ Արեւմտեան Հայաստանի մէջ ազատօրէն ինքնորոշուելու խնդիրը, արդի միջազգային, տարածաշրջանային եւ ներազգային իրողութիւններու շրջագծին մէջ, հետապնդելու հրամայական պահանջի հետաձգելը, աննդունելի է եւ անթոյլատրելի:

Համաձայն Սերի խաղաղութեան դաշնագրին, ստորագրուած Օգոստոս 10, 1920-ին, համաշխարհային առաջին պատերազմին մասնակցող՝ դաշնակից երկիրներու եւ Թուրքիոյ միջեւ, եւ միջազգային իրաւարարութեան վճռագրով երաշխատուած ԱՄՆ-ի նախագահ Վուոթո-Ուիլսոնի կողմէն, Հայ ժողովուրդին հատկացուած մօտաւորապէս 40,000 քւ.մղոն հողատարածքը, որը կ'ընդգրկէ Վասպուրական, Տարօն -Տուրուբերան, Կարին-Էրզրում եւ Համշէն-Տրապիզոն, այդ հողատարածքները պահանջելու եւ ետ առնելու համար, եւ հոն վերադառնալու, ժողովրդաւար կարգերով, պետութիւն հիմնելու եւ ազատ ու անկախ ապրելու համար, հետեւողական ու համակարգուած պայքար ծաւալելու եւ նոր՝ օրինական, ժողովրդաւարական եւ իրական ու սեփական տերերու ժառանգորդներուն նախաձեռնութիւնը պէտք է ըլլայ, այսինքն, Վասպուրականի, Տարօն-Տուրուբերանի, Կարին-Էրզրումի եւ Համշէն-տրապիզոնի տարագիր ժողովուրդի ժառանգորդները, որոնք զօրակցութիւնը կը վայելէն տուուեալ հողատարածքներու տարագիր Հայ ժողովուրդի ժառանգորդներու Միութիւններէն եւ կազմակերպութիւններէն:

Առանց դաւանանքի կամ գաղափարական խտրութեան, որպէս մէկ երկրի ժողովուրդի ժառանգորդներ, իրաւատիրոջ կամքով ու հաւատքով, քաղաքական եւ դիւանագիտական բոլոր ուղիներով, պէտք է պայքարինք, որ հասնինք մեր սրբազան նպատակին, որ վերադառնանք մեր երկիր, վերադառնանք Վան, Մուշ, Սասուն, Համշէն եւ Էրզրում:

Մայքըլ Սօսիկեան

Կլէնտէյլ, Քալիֆորնիա